2026

# ՊԱՀԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, ԱՎԱՐՏՈՒՄ

ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք, ք. Կապան, Գործարանային փողոց 1/7

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

# ՊԱՀԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ, ԱՎԱՐՏՈՒՄ

ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք, ք. Կապան, Գործարանային փողոց 1/7

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ    Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2026

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ....5
1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն....5
1.2 Հապավումներ....5
1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը ....6
1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը ....7
1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) ....10
1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*....10
1.5.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր*....11
1.5.3 *Ջրամատակարարում և ջրահեռացում*....14
1.5.4 *Էլ. մատակարարում*....14
1.5.5 *Գազամատակարարում*....14
1.5.6 *Էներգախնայողության միջոցառումներ*....15
1.5.7 *Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ*....16
1.5.8 *Գլխավոր հատակագիծ*....19
1.5.9 *Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց* ....20
1.5.10 *Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ*....21
2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ ....22
2.1 Աշխատանքների կատարման սխեմա....23
Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են ....24
2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը....24
2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները....25
2.3.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում* ....25
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ....29
3.1 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը....29
3.1 Կլիման ....30
3.2 Օդային ավազան....32
3.3 Ջրային ռեսուրսներ ....33
3.4 Հողերի նկարագիրը ....35
3.5 Կենսաբազմազանություն....36
3.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ....39
3.7 Պատմամշակույթային հուշարձաններ....40
3.8 Աղմուկ և թրթռում:....44
3.9 Թափոնների կառավարում ....46
3.10 Սոցիալական գործոն ....47

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ....48

4.1 Ռիսկերի գնահատում ....49
4.2 Արտանետումների աղբյուրները ....49
4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն ....49
4.3.1 *Մթնոլորտային օդ* ....49
4.3.2 *Ջրային ռեսուրսներ* ....50
4.3.3 *Հողային ռեսուրսներ* ....50
4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն* ....51
4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ* ....51
4.3.6 *Աղմուկ և թրթռում* ....52
4.3.7 *Թափոնների կառավարում* ....53
4.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում* ....54
5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ ....54

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ....55

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ ....58

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ....60

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ....61

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | **«ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ** |
| Իրավաբանական հասցե՝ | **ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք, ք. Կապան, Գործարանային փողոց 1/7** |
| Նախատեսվող գործունեության հասցեն՝ | **ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք, ք. Կապան, Գործարանային փողոց 1/7** |
| ՇՄԱԳ հաշվետվության կազմող՝ | **Ա/Ձ Արամ Գալոյան, հեռ. +374 99994222** |

## 1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

## 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել պահեստ, անավարտ շինությունը վերակառուցել և ավարտին հասցնել:

«Պահեստի կառուցում, անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք, ք. Կապան, Գործարանային փողոց 1/7 հասցեում:

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեույան իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Կապան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք, ք. Կապան, Գործարանային փողոց 1/7 հասցեում նախատեսվող օբյեկտի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

***ՀՀ Սահմանադրություն*** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

***«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ*** օրենք (2023, ՀՕ-150-Ն) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

***«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք*** ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի

որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

*«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)* - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

*ՀՀ ջրային օրենսգրք 2002թ.* - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները.

*«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը* (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

*«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)* - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

*«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք* (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

***«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք*** (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

***«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք*** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

***«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.***

***«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.***

***«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,***

***«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը***

***«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքը (27.11.2006թ.),*** որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

***ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն*** որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

***ՀՀ կառավարության 22.02.2018թ.–ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին»*** N 191-Ն որոշում:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.–ի հուլիսի 31-ի ***«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»*** N 781-Ն որոշում:

*ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն* ***«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի ն 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:***

*ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն* ***«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի ն 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի ն 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:***

***2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,***

***Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,***

***Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իգ» պարբերություն,***

***Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ***

***ՀՀ Կառավարություն 8 փետրվարի 2018 թվականի ն 108-ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի ն 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»***

ՀՀ կառավարության 27.05.2015թ.–ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

## 1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

### 1.5.1 *Ներկա վիճակի նկարագիր*

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք, ք. Կապան, Գործարանային փողոց 1/7 հասցեում:

Հողատարածքի բնութագրերը՝

- Կադաստրային ծածկագիրը՝ 09-001-0501-0029
- Մակերեսի չափը (հա)՝ 0.605

- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման,
- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,

Հողատարածքը կառուցապատված է, մասնավորապես՝

- Պահեստ՝ 165.08քմ
- Անավարտ շինություն՝ 3818.12քմ
- Պարիսպ՝ 13.64քմ

Առկա է ինքնակամ կառուցված 134.53քմ մակերեսով խանութ:

Նախատեսվող կառույցի հարևանությամբ առկա են բազմագործառույթ շենք-շինություններով ծանրաբեռնված հողամասեր և ազատ հողմասեր մասնավորապես՝

- Հեղուկ վառելիքի լցակայանի վարչական շենք՝ 10.89մ, վառելիքի կուտակիչներ՝ 100մ և ավելի
- Կիսակառույց շինություն՝ 8.5մ
- Սյունիք Օդանավալայան՝ 205.17մ
- Մ2 ավտոճանապարհ՝ 9.06մ, 8.21մ
- Էլեկտորցանց՝ 19.6մ

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են, սակայն, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կառուցպատողը կդադարեցնի աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնի լիազորված մարմնին:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, հետևաբար հողաբուսաշերտի պահպանման միջոցառումներ չի նախատեսվում:

### 1.5.2 *Նախատեսվող գործունեության նկարագիր*

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Կապան քաղաքի Գործարանային 17 համցեում՝ «ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող «Պահեստի կառուցում, անավարտ շինության վերակառուցում,ավարտում» օբյեկտի աշխատանքային նախագծի ճարտարապետաշինարարական կոնստրուկտորական մասերի կազմման համար հիմք են հանդիսացել՝

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 18042125-09-003 վկայականը,

2. Կապան համայնքի ղեկավարի կողմից:22 302, 2025 թ. տրված N ՆԹ 5809.25 նախագծման թույլտվությունը,

3. «ՏՐԻՎԻՈՒՄ ԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ կողմից տրված տեխնիկական եզրակացությունը,

4. Պատվիրատուի առաջադրանքը,

5. Նախագծման պայմանագիրը:

Համաձայն առաջադրանքների և տեխնիկական եզրակացության նախագծով նախատեսվել է կիսակառույց արտադրական շինությունը ավարտին հասցնել և ստեղծել՝

1. Սրահ-273.86 քմ

2. Բացօթյա ծածկ – 154.52 քմ

3. Առևտրի սրահ – 1700.60 քմ

4. Հանդերձարան-սանհանգույց – 23.20 քմ

5. Հանդերձարան-սանհանգույց – 23.20 քմ

Այդ նպատակով ե/բ 400 x 300 մմ հատույթով սյուներից 10 հատ և 300 x 300 մմ հատույթով ե/բ սյուներից՝ 5 հատ ապամոնտաժվում են՝ մոնտաժելով նոր 400 x 300 ե/բ հատույթով սյուներ ՝ 13 հատ որոնց վերին ճակատը (ինչպես գոյություն ունեցող սյուները) 600 x 300 մմ չափերով են, վրադիր մետաղական դետալներով:

Նախատեսվել է գոյություն ունեցող ե/բ երկթեք 5 հատ ֆերմաները ապամոնտաժել և տեղադրել նոր մետաղական երկթեք և միաթեք ֆերմաներ՝ բեռնվածության հավասարաչափ բաշխման նպատակով:

Նախատոսվում է գոյություն ունեցող հավաքովի d-250 մմ հաստությամբ արտաքին պատերն ապամոնտաժել և շարել նոր պատեր՝ d=10 սմ հաստությամբ սենդվիչ սալերով՝ ստեղծելով բացվածքներ պատուհանների և մուտքի դռների համար:

Քանի որ կառույցի ±0,00 նիշը բարձր է փողոցի նիշից միջինը 1,6 մ-ով, կառուցվում է մուտքի արտաքին աստիճաններ և թեքահարթակ:

Սեյսմազինվածության բարձրացման նպատակով նախատեսվել է նաև մոնտաժել ուղղահայաց ենթահեծաններ խաչաձև կապեր և ձգաններ 12 մ երկարությամբ ֆերմաները միջին մասից իրար միացնելու համար: Տանիքածածկը նախատեսվել է d=10 սմ հաստությամբ սենդվիչ սալերից, մետաղական կռվածքներից կավարամածի վրայից, որոնց կոշտության նպատակով տեղադրվում են նաև 7,5 չափի անկյունակներ:

Ե/Բ սյուների վերին 600 x 300 մմ մակերեսը թույլ է տալիս նաև ստեղծել 300 մմ լայնությամբ խոռոչներ, որոնց մեջ տեղադրվում են սև 1,5 մմ հաստությամբ թիթեղից ջրահավաք առուներ, որոնք՝ ջրատար Փ100 մմ տրամագծով պողպատե խողովակների միջոցով 12 մ մեկ միանում են ջրատար Փ 200 մմ տրամագծով տորգետնյա խողովակներին՝ «Է - «Ը, առանցքների միջև ստեղծվող փակուղու ջրահեռացման նպատակով կառուցվում է բետոնը առու՝ մետաղական ջրընդունիչ ճաղաշարով, որը նույնպես միացվում է ջրահեռացման Փ200 մմ տրամագծով խողովակին: Իրականացվում են նաև ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ՝

գլխավոր ճակատը «Ա» և «10» առանցքներով ճակատները պատվում, փակվում են d=10սմ հաստությամբ սենդվիչ սալերով:

Շինարարության տեղանքը, համաձայն ՀՀՇՆ /1 – 20 - 34 «Սեյսմիկ շինարարության նախագծման նորմերը, գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում:

Պահեստները նախատեսված են ոչ պարենային ապրանքների համար, մասնավորապես՝ շինարարական նյութեր, կահույքի պատրաստման պարագաներ, որոշ տեսակի կենցաղային տեխնիկա:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

- Կառուցապատման մակերես, նեռարյալ գոյություն ունեցող կառուցապատում՝ – 4515.85քմ
- Բարեկարգման մակերես /սալվածքներ, ճանապարհներ/՝ 1534.15
- Հարկայնություն՝ 1 հարկ,
- Շինության բարձրություն՝ 7.8մ

Ստորգետնյա կառուցապատում չի նախատեսվում, շինության տանիքը հարթ է, սենդվիչ պանելներից:

Որպես հաճախորդների համար ավտոկայանատեղի ծառայում է շինության դիմացի հատվածը, որը ևս ներառված է ընդահինուր հողատարածքի մեջ:

Բեռնատար մեքենաների մուտքը դեպի պահեստ նախատեսվում է Մ2 ավտոճանապարհից, բեռնաթափումը կազմակերպվելու է շինության բակային հատվածում և Մ2 միջպետական ճանապարհի վրա հավելյալ ծանրաբեռնվածություն չի առաջացնի:

Նախատեսված է նաև բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ (թեքահարթակներ, մուտքային դռների բացվածքների չափերը, ավտոկայանատեղերի դիրքը և չափերը և այլն):

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Աշխատանքային նախագիծը կատարվել է համաձայն հետևյալ նորմերի՝

1. ՀՀՉՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն» նախագծման նորմեր
2. ՀՀՇՆ 13-03-2023 «Քաղաքաշինության,քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
3. ՀՀՇՆ 52-01 «Բետոնե և երկաթբետոնե կոնտրուկցիաներ»,
4. ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ»,
5. ՀՀՇՆ 31-03-2020 «Հասարակական շենքեր և շինություններ»,
6. ՀՀՇՆ 31-03-2023 «Վարչական և կենցաղային շենքեր»,
7. ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր»,
8. ՀՀՇՆ 40-01-02 «Ջրամատակարարում,արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,
9. ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի,արտաքին ցանցեր և կառուցվածքներ»,
10. ՀՀՇՆ IV-12.02.01-2004 «Ջեռուցում,օդափոխություն և օդի լավորակում»,
11. ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում»,
12. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»,
13. ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկական շինարարություն»,
14. ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում»:

### 1.5.3 *Ջրամատակարարում և ջրահեռացում*

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի «Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծ կազմելու համար հիմք են հանդիսացել նախագծման տեխնիկական առաջադրանքը և ՀՀՇՆ 40-01-02; ՀՀՇՆ 40-01,03-2022 նորմերի պահանջները:

Շենքի ջրամատակարարումը իրականացվում է համաձայն Վեոլի Ջուր ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի:

Մոնտաժվում է ջրամատակարարման ներքին համակարգ սառը ջրի PN 10 d=25x2.3 մմ պոլիպրոպիլենային խողովակներից համապատասխան սարքավորումներով, որը միացվում է շենքի գոյություն ունեցող ներքին ցանցին:

Կառուցվում է նաև ջրահեռացման համակարգ փ 110 x 2,7 և փ 50 x 2 մմ պոլիպրոպիլենային խողովակներից՝ կոյուղատարը միացնելով նոր կառուցվող կոյուղու դիտահորերին՝ ապահովելով ոչ պակաս i=0,02 թեքության: Սանհանգույցներում տեղադրվում են հախճապակե զուգարանակոնքեր և հախճապակե լվացարաններ, իսկ լոգարաններում խառնիչներ, ցնցուղներ: Դիտահորերից կոյուղաջրերը ուղղվելու են դեպի կոյուղու ցանց:

### 1.5.4 *Էլ. մատակարարում*

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի «Պահեստի կառուցում, անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի էլեկտրոմատակարարման նախագիծը կազմվել է ՀՀՇՆ22-03-2017 շին, նորմերի պահանջներին համապատասխան:

Էլեկտրամատակարարումը իրականացվում է համաձայն լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի /կցված Հավելվածներ բաժնում/: Սնումն իրականացվում է ՏԵ 3576-ի գ/լ վահանից, լարումը 0.4կՎ, հզորության փափոխություն չի նախաբեսվում:

Ամբողջությամբ մոնտաժվում են նոր էլեկտրամատակարարման համակարգեր բազմաջիղ պղնձե հաղորդալերով:

Նախատեսվել է նոր կառուցվող հատվածում տեղադրել մետաղական վահանակ եռաֆազ ավտոմատ անջատիչով՝ 63 Ա, իսկ սենքերում պատերի մեջ հատակից 1.5մ բարձրության վրա տեղակայվում են 2 հատ պլաստմասե նոր բաշխիչ վահանակներ, յուրաքանչյուրը 8 հատ միաֆազ ավտոմատ անջատիչներով՝ 25Ա հզորությամբ:

Բաշխիչ վահանակների սնուցումը մետաղական վահանակից նախատեսվում է ПВС 4x10մմ պղնձե բազմաջիղ մալուխով,իսկ մետաղական վահանակի սնուցումը գոյություն ունեցող մետաղական մուտքի վահանակից վերգետնյա ПВС 4x25մմ մալուխով:

Պլաստմասե բաշխիչ վահանակից մինչև սենյակների ճյուղավորման տուփերը միացվում են ППВГ 2 x 4մմ²- բազմաջիղ հաղորդալարերով, իսկ վարդակները և անջատիչները ППВГ 2x2.5մմ պղնձե բազմաջիղ հաղորդալարերով:

### 1.5.5 *Գազամատակարարում*

Գոյություն ունեցող շինության գազամատակարարումը իրականացվում է համաձայն Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի: Գազամատակարարումը

իրականացվում է ջեռուցման նպատակով, որի համար շենքում տեղադրված է 2 հատ 32կՎտ դրվացքային հզորությամբ պատային կաթսաներ: Նախատեսվող պահեստային մասնաշենքի համար լրացուցիչ կաթսաներ չի նախատեսվում, գոյություն ունեցող կաթսաների հզորությունը ամբողջովին բականացնում է:

### 1.5.6 *Էներգախնայողության միջոցառումներ*

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութորով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

**1.5.7 *Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ***




ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000
ներկայացվող տարածք
0015
0034
0035
27.8
19.6
0039
0025
0038
10.3
0029
0037
59.4
0022
0031
0026
0050



1.5.8 *Գլխավոր հատակագիծ*



### 1.5.9 *Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց*

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

| N | Աշխատանքների անվանումը | 2 տարի | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | XIII | XIV | XV | XVI | XVII | XVIII | XIX | XX | XXI | XXII | XXIII | XXIV |
| 1. | Հողային աշխատանքներ | — | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2. | Ե/բ ֆերմաների,սյուների և պատերի ապամոնտաժում | | — | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3. | Նոր ե/բ սյուների մոնտաժում | | | — | — | — | — | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4. | Ծածկի մետաղական կոնստրուկցիաների և տանիքի մոնտաժում | | | | | — | — | — | — | — | | | | | | | | | | | | | | | |
| 5. | Պատերի կառուցում | | | | | | | | | — | — | — | — | | | | | | | | | | | | |
| 6. | Հատակների կառուցում | | | | | | | | | | | | | — | — | | | | | | | | | | |
| 7. | Դուռ-պատուհանների տեղադրում | | | | | | | | | | | | | | — | | | | | | | | | | |
| 8. | Մետաղական հիմնակմախքով պահեստի կառուցում | | | | | | | | | | | | | — | — | — | — | | | | | | | | |
| 9. | Էլ. մոնտաժային աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | — | — | — | | | | | | | |
| 10. | Ջրամատ. և ջրահեռացման մոնտաժային աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | | | | | |
| 11. | Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | |
| 12. | Տարածքի բարեկարգում | | | | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | |
| 13. | Շին. աղբի տեղափոխում աղբավայր | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | — |

| Կոնստրուկտոր | Վ. Բաղալյան | | Պատվիրատու՝ «ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ճարտարապետ | Մ.Համբարձումյան | | «Պահեստի վերակառուցում,անավարտ շինության վերակառուցում,ավարտում» | ՆՓ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| Ճարտարագետ | Դ.Իսրայելյան | | | | | |
| «ՎԻԼՀԱՄ» ՍՊԸ ԼԻՑ. ՔՊԼ 001115 | | | Օրացուցային գրաֆիկ | ԱՆ | ՃՇ- | |

**1.5.10** *Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ*



## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1.Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2.Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3.Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2.Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

## 2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 24 ամիս: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքների շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոսորակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” էքսկավատորով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոսորակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզանական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշաhարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնհողային զանգվածը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցմել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են գնահատման հաշվետվությունը հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

**Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են**

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

## 2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև՝

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| № п/п | Անվանում | Մակնիշ | Քան. | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Ավտոկռունկ | КС-55713-6 | 1 | կամ համարժեք |
| 2 | Աշտարակային կռունկ | Т6013А-8А | 2 | կամ համարժեք |
| 5 | Բետոնամղիչ ավտոմոբիլ | 55111-070 | 1 | ըստ պահանջի |
| 6 | Ինքնաթափ ավտոմոբիլ | КамАЗ-5511 | 2 | կամ համարժեք |
| 7 | Էքսկովատոր Hyundai | 3323 | 3 | կամ համարժեք |
| 8 | Էլ. եռակցման սարք | СТН 500 | 3 | կամ համարժեք |
| 8 | Շարժական կոմպրեսոր | ЗИФ - 55 В | 1 | ըստ պահանջի |
| 9 | Փոշեճնշիչ սարքավորում | Hefei Topwell Machinery TFC80 | 1 | կամ համարժեք |

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

## 2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

*Նախատեսվող* «Պահեստի կառուցում, անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման հողային աշխատանքների իրականացման արդյունքում կառաջանա՝

- *հանույթ՝ 41մ³ հողային զանգված*
- *հետլիցք՝ 12մ³ հողային զանգված*

Ավելցուկային 29 խմ հողային զանգվածը կօգտագործվի տարածքի հարթեցման համար:

***Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝20 մարդ, որից***

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 1 մարդ
- Բանվորներ, վարորդ - 19 մարդ

### 2.3.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ ավազ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**a)Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

**$W_{\text{ē.ï.}}$ = (n x N + $n_1$ x $N_1$) x T,** որտեղ

**n –** ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

**N–** ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ$^3$օր/մարդ

**$n_1$–** սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 19 մարդ

**$N_1$** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ$^3$օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 720 օր

**$W_{\text{խ.տ.}}$**= (1 x 0.016 + 19 x 0.025) x 720 =353.52 մ$^3$/շին. ժամ. կամ 0.49 մ$^3$/օր:

**b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

**$Մ_1$ = $S_1$ x $K_1$ x T,** որտեղ՝

$S_1$ – ջրվող տարածքի մակերեսը, 2500 մ$^2$,

$K_1$ – 1 մ$^2$ օրական ջրցանի նորմը, 0.0015 մ$^3$,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

D – օրեկան ջրցանի քանակը, 2

**$Մ_1$** = 2500 x 0.0015 x 300 x 2 = 2250 մ$^3$/շին. ժամ. կամ 7.5 մ$^3$/օր

**c) Ամիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

**$Մ_2$ = $S_2$ x $K_2$ x T,** որտեղ՝

$S_1$ – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 հատ,

$K_1$ – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ$^3$,

**T** –ժամանակահատվածը օրերով, 720

**$Մ_2$ = 10 x 0.14 x 720 = 1008** մ$^3$/շին. ժամ. կամ 1.4 մ$^3$/օր

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3611.52 մ$^3$/շին. ժամ:**

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն: Բիոզուգարանները կսպասարկվեն մասնագիտացված կազմակերպության կողմից և կդատարկվեն ըստ անհրաժեշտության:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն, մասնավորապես՝

1. Հանդերձարանին ներկայացվող պահանջներն են.

1) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններից զերծ կազմակերպություններում, անձնական հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են բաց հանդերձապահարաններով, կամ կախիչներով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,

2) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպություններում, անձնական հագուստի և աշխատանքային հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են փակվող դռներով

երկտեղանոց հանդերձապահարաններով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,

3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխություն:

12. Հանդերձարանը նախատեսված է անձնական (դրսի և տնային) և աշխատանքային հագուստի պահպանման համար:

2. Ցնցուղարանին ներկայացվող պահանջներն են.

1) ցնցուղների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 7 մարդուն մեկ ցնցուղ հաշվարկով,

2) ցնցուղների թիվը չի գերազանցում 30-ը,

3) իրականացվում է բնական օդափոխում:

14. Ցնցուղարանը ներառվում է աշխատանքային միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական), ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպությունների սանիտարակենցաղային հարմարությունների կազմում և տեղակայվում է կից:

3. Լվացարանին ներկայացվող պահանջներն են.

1) սարքավորվում է արմնկային կամ ոտնակային կառավարման հարմարանքներով՝ վտանգավոր, մաշկի միջոցով օրգանիզմ թափանցող, խիստ հոտավետ նյութերի ինչպես նաև ստերիլ նյութերի արտադրության կազմակերպություններում,

2) ապահովվում է հոսող ջրով, կախիչով, հեղուկ օճառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով,

3) ծորակների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 10 աշխատողին մեկ ծորակ հաշվարկով:

4. Արտադրության բնույթից կախված՝ ձեռքերի պարբերական սանիտարական մշակման համար, լվացարանները տեղադրվում են նաև արտադրական սենքերում՝ աշխատատեղերին մոտ գտնվող տարածքներում:

5. Զուգարանին ներկայացվող պահանջներն են.

1) սանիտարատեխնիկական սարքավորումների (զուգարանակոնքերի) թիվը սահմանվում է 15 մարդուն մեկ սանիտարատեխնիկական սարքավորում հաշվարկով,

2) նախամուտքում յուրաքանչյուր 4 սանիտարատեխնիկական սարքավորման հաշվարկով տեղադրվում է 1 լվացարան, բայց ոչ պակաս, քան մեկ լվացարան՝ յուրաքանչյուր զուգարանում,

3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխում,

4) սանիտարական սարքավորումների թվի 3-ից ավելի դեպքում, զուգարանում տեղադրվում է ներհոս-արտածիգ արհեստական օդափոխության համակարգ:

7. Զուգարանի և հեռավորությունը աշխատատեղերի միջև 50 մետրից ոչ ավելի է:

8. Բազմահարկ կազմակերպություններում զուգարանը տեղադրվում է յուրաքանչյուր հարկում:

9. Կազմակերպություններում հերթափոխի ընթացքում ընդգրկված աշխատող տղամարդկանց և կանանց զուգարանները լինում են առանձին:

10. Զուգարանի սանիտարական պահպանումն ապահովվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի N 06-Ն հրամանով հաստատված «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների:

11. Հանգստի սենյակին ներկայացվող պահանջներն են.

1) կահավորվում է համապատասխան կահույքով, կախիչներով, լվացարաններով, խմելու ջրով,

2) ապահովվում է տաքացման և/կամ հովացման սարքավորումներով:

12. Հանգստի սենյակը նախատեսվում է կազմակերպություններում, որտեղ առկա են սառեցնող և տաքացնող միկրոկլիմայով աշխատատեղեր, ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններ՝ աշխատանքի ընթացքում աշխատակիցների ջերմատվության կարգավորման և աշխատողների հանգստի նպատակով:

13. Սանիտարակենցաղային հարմարությունները տեղադրվում են առանձին սենքերում կամ՝ արտադրություններին հարակից:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի, կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանի համար ջրամատակարարումը իրականացվում է ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջրամատակարարումը կիրականացվի տարածքու գոյություն ունեցող ցանցից:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կիեռազվի որպես շինաղբ:

## 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աշխարհագրական տեսակետից հետազննվող տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի ք. Կապանի Գործարանային փողոց թիվ 1/7 անավարտ շինության հասցեիում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազննվող տեղամասը գտնվում է Ողջի գետի հունի բարձր մակարդակի հարթակում:

Մեր ուսումնասիրվող տեղամասը գրեթե հարթ է և ռելիեֆի բացարձակ բարձրությունները տատանվում են ծովի մակարդակից մոտ 765 մետրի վրա:

Երկրաբանական կառուցվածքում ուսումնասիրվող տեղամասում մասնակցում են չորրորդական հասակի գետանստվածքային ապարները: Տեղամասի գրունտները հիմնականում ներկայացված են ավազակավերի տեսքով:

Հիդրոերկրաբանական տեսակետից Հիդրոերկրաբանական տեսակետից հետազննվող տեղամասին մոտ նախկինում հորատման արդյունքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Դրանք գտնվում են գետին ավելի մոտ ափամերձ շրջանում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04-2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:

### 3.1 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, փորված հետախուզահորերի և արխիվային նյութերի տվյալների՝ ( նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ լիցքերը, ավազակավերը և ավազի, մանրախճի պարունակությամբ ավազակավերը:

Տեղամասի ինժեներաերկրաբանական կտրվածքին մասնակցում են 3 հիմնական գրունտների շերտեր կամ ինժեներաերկրաբանական տարրեր (ԻԵՏ) վերևից–ներքև. Ստորև ներկայացված է հիմնական գրունտների շերտերը կամ ԻԵՏ-ները:

Գրունտերի նկարագրությունները

Շերտ-1

Լիցք՝ (մանրախիճ, կոպիճ ավազակավի լցիչով, տարբեր շինարարական նյութերի խառնուրդների պարունակությամբ):

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101 23.1) II կարգ է:

Շերտ-2 (alQ)

Ավազակավ՝ բաց շագանակագույն, պինդ մածուցիկության, ավազի, մանրախճի պարունակությամբ:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101 33.4) III կարգ է:

Շերտ-3 (alQ)

Ավազակավ՝ բաց շագանակագույն, պինդ մածուցիկության, խոնավ: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն

ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101 33.3) II կարգ է:

## 3.1 Կլիման

Կապան քաղաքը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտու հյուսիսում՝ մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիների սահմանագլխում, ինչի շնորհիվ այստեղ շատ հստակ արտահայտված են տարվա եղանակների հերթափոխությունը: Քաղաքում ամռանը ակտիվանում են հարավից թափանցող արևադարձային տաք և չոր օդային զանգվածները, իսկ ձմռանը հյուսիսից եկող ցուրտ օդը:

Զգալի է նաև Կասպից ծովի ազդեցությունը: Տեղանքը անհարթ է, բարձրությունների տատանումները գերազանցում են 300մ-ը: Հաճախ երբ բնակավայրի բարձրադիր մասերում ձմռանը ձյուն է տեղում, ապա ցածրադիր հատվածներում՝ անձրև: Հարակից լեռնալանջերի թեքությունները, որոնք հասնում են 30-40 աստիճանների, բուսածածկի հետ միասին ևս կլիմայաստեղծ ակտիվ գործոններ են:

Կապանում տարեկան միջին բազմամյա ջերմաստիճանը 12,2°C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ -22. 1°C, իսկ բացարձակ առավելագույնը հուլիսին՝ +42°C: Տարեկան բացարձակ ջերմաստիճանի լայնույթը 64°C:

Ուժգին քամիներ հազվադեպ են լինում: 15 մ/վրկ. և ավելի ուժգնությամբ քամիներ տարվա կտրվածքով կարող են դիտվել ընդամենը 2-3 օր: Տիրապետող են հարավարևելյան և արևելյան ուղղության քամիները՝ 1-3 մ/վրկ միջին արագությամբ:

Համաձայն ՀՀՇՆ «Շինարարական կլիմայաբանության» ուսումնասիրվող տարածքում սառեցման խորությունը կազմում է 0,2մ:

Տարածքի կլիմայական պայմանների մասին առավել ամբողջական տեղեկատվություն կազմելու համար ստորև բերված են Կապան քաղաքի կլիմայական տարրերը՝ ըստ ՀՀՇՆ 22-01-24 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերի:

**Օդի միջին ջերմաստիճանը, °C**

Աղյուսակ 2.1.

| Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը | Բարձրություն ծովի մակարդակից մ | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան °C | Բացարձակ նվազագույն °C | Բացարձակ առավելագույն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | | |
| Կապան | 910 | 0.8 | 2.4 | 5.9 | 11.5 | 16.3 | 20.6 | 23.7 | 23.1 | 18,9 | 13.1 | 7.3 | 2.6 | 12.2 | -22.1 | 42.4 |

**Օդի հարաբերական խոնավությունը, %**

Աղյուսակ 2.2.

| Բնակավայրի, օդերևութա-բանական կայանի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան, % | Միջին ամսական ժամը 15-ին | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | | Ամենա-ցուրտ ամսվա % | Ամենա-շոգ ամսվա, % |
| Կապան | 75 | 75 | 75 | 73 | 74 | 67 | 62 | 63 | 72 | 78 | 78 | 77 | 73 | 53 | 44 |

## Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

| Բնակավայրի, օդերևութա-բանական կայանի անվանումը | Տեղումների քանակը (Միջին ամսական / օրական առավելագույն), մմ | | | | | | | | | | | | | Ձնածածկույթ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | տարեկան | Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակ | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ |
| Կապան | 27/30 | 32/40 | 63/58 | 72/76 | 98/99 | 64/70 | 31/176 | 27/70 | 39/55 | 46/51 | 41/63 | 26/33 | 566/176 | 32 | 31 | 70 |

## Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

| Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա) | Ամիսներ | (Կրկնելիությունը,% / Միջին արագությունը,մ/վ), ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը՝ հունիս-օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին՝ մ/վրկ | Գերակշռող ուղղությունը՝ դեկտեմբեր-փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հուլիսին՝ մ/վրկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հյուսիսային (Հս) | Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ) | Արևելյան (Արլ) | Հարավ Արևելյան (ՀվԱրլ) | Հարավ (Հվ) | Հարավ Արևմտյան (ՀվԱրմ) | Արևմտյան (Արմ) | Հյուսիս Արևմտյան (ՀսԱրմ) | | | | | | |
| Կապան | 935.6 | հունվար | 2/2,2 | 2/2,0 | 29/2,3 | 30/2,0 | 6/1,9 | 5/1,6 | 18/2,2 | 8/1,9 | 46 | 1,0 | Հվ Արլ | 2,4 | Արլ | 2,3 |
| | | ապրիլ | 2/2,5 | 1/2,0 | 37/2,9 | 32/2,5 | 4/2,3 | 3/1,9 | 12/2,7 | 9/2,0 | 36 | 1,5 | | | | |
| | | հուլիս | 2/2,2 | 2/1,9 | 31/2,7 | 34/2,4 | 6/1,9 | 3/1,6 | 11/2,0 | 11/1,6 | 39 | 1,2 | | | | |
| | | հոկտեմբեր | 1/2,1 | 1/1,7 | 34/2,5 | 32/2,2 | 6/1,9 | 4/1,6 | 12/2,0 | 10/1,3 | 44 | 1,1 | | | | |

## 3.2 Օդային ավազան

Օդային ավազանի որակի մոնիթորինգը կատարվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2024 թվականի 4-րդ եռամսյակում Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




*Գծապատկեր 39. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները*




*Գծապատկեր 40. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները*

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

## 3.3 Ջրային ռեսուրսներ

Կապանի հիմնական ջրագրական միավորը Ողջի գետն է միջին հոսանքում՝ իր Վաչագան, Գեղանուշ, Աճանան, Գիրաթաղ, Գեղի, Սնքար վտակներով:

Ողջի գետը մարզի մեծությամբ երկրորդ գետն է՝ 85 կմ երկարությամբ, որն սկիզբ է առնում Կապուտջուղի գագաթամերձ լանջերից և հոսում մեծ մասամբ անտառապատ խոր կիրճով: Ողջի գետը ունի մեծ անկում, որը գետի վերին հոսանքում մեկ կիլոմետրի վրա հասնում է 60 մետրի:

Ստորև աղյուսակում բերված են Ողջի գետավազանի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքները:

Աղյուսակ 9 . Ողջի գետավազանի ջրային հաշվեկշռի տարրերի միջին բազմամյա արժեքները

| Գետավազան | Մակերես, կմ² | Տեղումներ Մլն.մ³ / մմ | Գոլորշիացում Մլն.մ³ / մմ | Գետային հոսք Մլն.մ³ / մմ | Խորքային հոսք Մլն.մ³ / մմ |
|---|---|---|---|---|---|
| Ողջի | 1240 | 917.9 / 740 | 419.5 / 338.2 | 416.6 / 335.9 | 81.7 / 65.9 |

*Աղբյուրը՝ ՀՀ ՇՄՆ ՀՄԿ ՊՈԱԿ՝ մշակված «Գեոինֆո» ՍՊԸ-ի փորձագետների կողմից, 2022թ.*

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2024 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

## Հարավային ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

*Հիդրոլոգիական դիտարկումներ*

*Աղյուսակ 11. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.*

| Գետ | Դիտակետ | Միջին ամսական ելքեր. մ³/վ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հոկտեմբեր | | | նոյեմբեր | | | դեկտեմբեր | | |
| | | փաստացի | նորմա | % | փաստացի | նորմա | % | փաստացի | նորմա | % |
| Մեղրիգետ | Մեղրի | 0.33 | 0.95 | 35 | 0.83 | 1.09 | 76 | 0.64 | 0.98 | 65 |
| Ողջի | Կապան | 1.02 | 2.53 | 40 | 1.02 | 2.07 | 49 | 0.94 | 1.61 | 58 |
| Որոտան | Գորայք | 2.40 | 2.07 | 116 | 2.40 | 2.02 | 119 | 2.38 | 1.99 | 120 |

Մակերևութային ջրերի որակ

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև հատվածում նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սիսիան քաղաքից վերև հատվածում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Սիսիան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Սիսիան գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ:

Շաքի (N532), Անգեղակոթ (N1175) գյուղերի և Գորիս քաղաքի (N1399) բնաղբյուրներում դիտվել է ջրի ծախսի նվազում: Գորհայք (N529), Սպանդարյան (N537), Անգեղակոթ (N1323) գյուղերի և Գորիս քաղաքի (N 899) դիտակետերում ջրի ծախսը եղել է անփոփոխ:

Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 4 դիտակետում: Հարավային ՋԿՏ-ի դիտակետերում հանքայնացումը, նիտրատ, սուլֆատ և քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Գծապատկեր 91. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 92. Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի դիտակետերի հանքայնացումը

## 3.4 Հողերի նկարագիրը

Կապանի տարածքում հողառաջացնող բազմազան ապարներ կան: Բարգուշատի և Մեղրու լեռների բարձրադիր տարածքներում տարածված են լեռնամարգագետնային թույլ ճմային, խորքային չհազեցած հողերը, որոնք ցածրադիր մասերում վերածվում են մարգագետնա-տափաստանային մնացորդային չհազեցած հողերի: Խուստուփի բարձրադիր

մասերում հոծ անտառը ձևավորել է անտառային դարչնագույն կրազերծված կավայնացած հողեր։

Կապանից հարավ գերակշռում են անտառային դարչնագույն կրազերծվախ հողերը, որոնք անտառազուրկ տարածքներում վեր են ածվել տափաստանների։ Այս հողերը հիմնականում զբաղվում են արոտավայրերն ու խոտհարքները։ Քաղաքից դեպի հարավ արևելք, հարթավայրային տարածքներում գտնվում են անտառային դարչնագույն կարբոնացված տափաստանային հողերը։

Գետերի հովիտներում հողերը ալյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ բերուկներ են, կավավազներ՝ կոպիճի, խճավազի և գլաքարերի տղմավազային երևակումներով։

Բարձրադիր մասերում կան մայրական ապարների մերկացումներ։

Տարածքի հողերն ունեն էրոզվածության տարբեր աստիճան։ Հիմնական պատճառը անթրոպոգեն ազդեցությունն է, մասնավորապես բացհանքերը, լցակույտերը, բաց հանքերից հանված չռեկուլտիվացված ապարները։ Անտառային տարածքներում հողերի էրոզիայի աստիճանը ցածր է։

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- ժամանակակից գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը։

2024 թվականի 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Սյունիքի մարզի Ողջիի փակված պոչամբարում, ինչպես նաև Տավուշի մարզի ֆոնային տարածքներում։

Սյունիքի մարզի Ողջիի պոչամբարում հանքարդյունաբերական տարածքում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.7-29.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 2.5-24.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 18.7-499.0 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.4-7.6 անգամ, արսենի պարունակությունը՝ 7.0-36.5 անգամ։ Վանադիումի, կապարի, ծարիրի և մանգանի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները։

### 3.5 Կենսաբազմազանություն

**<u>Բուսական աշխարհ</u>**

Քաջարան քաղաքն ամբողջովին ընդգրկված է Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանում (ֆլորիստիկ շրջանը գտնվում է 300-3900մ բարձրությունների վրա), որտեղ հանդիպում է մոտ 2000 բուսատեսակ՝ համակեցությունների հետևյալ տիպերով.

- կիսաանապատային
- անտառային
- տափաստանային
- մարգագետնային
- նոսրանտառային

Այստեղ կա ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 94 բուսատեսակ, որոնցից 20-ը գտնվում են կրիտիկական վիճակում, 46-ը վտանգված տեսակ են, 25-ը՝ խոցելի, 3 տեսակ գտնվում են անհետացման վիճակին մոտ։ 41 տեսակը էնդեմիկ է։

Տարածաշրջանում հանդիպում են տարախոտային տափաստանային, անտառային նոսրանտառային, իսկ Կապանից հարավ-արևելք՝ կիսաանապատային բուսականությունը:
Շրջանը հարուստ է նաև ծառերով ու թփերով (մոտ 190 տեսակ): Անտառները հիմնականում ունեն ջրակարգավորիչ, հակաէրոզիոն և միջավայրապաշտպան նշանակություն:
Անտառածածկ տարածքներում գերակշռում են կաղնու, բոխու և խառը անտառները:
Տարածված են արքայական կաղնու, վրացական կաղնու և արևելյան կաղնու համակեցությունները: 2700մ-ից բարձր գտնվում են մերձալպյան մարգագետինները:
Անտառածածկ տարածքներում շատ են նաև վայրի պտղատու ծառերը (հունական ընկուզենի արևելյան խնձորենի, սալորենի հոն), դեղաբույսերն ու վայրի բույսերը:
Ցածրադիր կիրճերի հարավային լանջերում գերակշռում են գիհու նոսր անտառները, շիբլյակների նոսրանտառներում հանդրոում են արևելյան կաղնին, վրացական թխկին, ալեհեր կեռասենին, իլենու, գիհու, տանձենու ու մասրենու տարբեր տեսակներ:
Խոտածածկույթում գերակշռում են քսերոֆիլ բուսատեսակներն ու էֆեմերները:
Գարնանը խոտածածկի հիմնական տեսակներն են կուսածաղիկ խոտային, Բերենիկե բազմաբաժան, խուլեղինջ ցողունագիրկ և այլն:
Շիբլյակներում գազուտները շրջապատված են ճիմ առաջացնող հացազգիներով:
Ամենուրեք հանդիպում են բանգի սևը, կարմիր և սողացող երեքնուկը, դեղատու խատուտիկն ու իշառվույտը, սովորական ծտապաշարը, սովորական հազարատերևուկը, դաշտային ձիաձետը, սովորական ճարճատուկը, թռչնային մատիտեղը, բանջարանոցային դանդուռը, սովորական սիբեխըզանգուրն ավելուկը և այլն:



*Կուսածաղիկ խոտային (Vinca herbecea)*



*Հազարատերևուկ սովորական (Achillea millefolium)*



*Օշինդր դառը (Artemísia absínthium)*



*Ճարճատուկ սովորական (Cichorium intybus)*

Ուսումնասիրվող տարածքում կարող է հանդիպել Խոզանափուշ Գաբրիելյանի - Cousinia gabrieljanae Takht. et Thamanjan բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակը: Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ հանդիպելու դեպքում շինարարական աշխատանքները անմիջապես կդաթարեցվեն և այդ մասին կհայտնվի լիազորված մարմնին:

**Կենդանական աշխարհը**

Տարածաշրջանի կենդանական աշխարհը բավականին բազմազան է և հարուստ:

Բազմազան է ոնողնաշարռավորների ֆաունան (որդեր, մրջուններ, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, թիթեռների տեսակներ, երկթևանիներ և այլն), բազմաթիվ տեսակներ ընգրկված են ՀՀ Կարմիր գրքում: Սողունները ներկայացված են 23 տեսակով Մողեսներից հանդիպում են դեղնափորիկը, իլիկամողեսը, Ռադդեի ժայռային մողեսը, միջին մողեսըբարեկազմ օձագլուխը: Հազվագյուտ տեսակներից հանդիպում է շերտավոր մերկաչքը: Օձերից հանդիպում են որդանման կույր օձը, արևմտյան վիշապիկը, կարմրափոր և քառաշերտ սահնճձը: Լայնորոն տարածված տեսակներից է գյուրզան:

Կարկիր գրքում գրանցվածներից են հայկական իժը և հայկական լեռնատափաստանային իժը:

Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը, փոքրասիական գորտը, կանաչ դոդոշն ու փոքրասիական ծառագորտը:

Սյունիքի մարզում կա Կարմիր գրքում գրանցված 8 թռչնատեսակ՝ մեծ ենթարծիվ, տափաստանային հողմավար բազե, կովկասյան մարեհավ, անապատային կաքավ, վայրի հնդկահավ, սև փայտփոր և ալպիական ճայ:

Լայն տարածում ունեն նաև կաթնասունները՝ եղեգնակատու (Felis chaus), մացառախոզ, եվրոպական այծյամ, վայրի ոչխար (մուֆլոն), գորշ արջ, շնագայլ,անտառային կատու, նապաստակ, վայրի խոզ:

Հնդկական մացառախոզը, լայնականջ ոզնին, անտառակատուն գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Կարմիր գրքում գրացված տեսակներից հանդիպում են չղջիկներից՝ մեծ և փոքր պայտաքիթ (Rhinolophus ferrumequinum Schreb., Rhinolophus hipposideros Bechstein) և Մեհելիի պայտաքիթը (Rhinolophus mehelyi Matschie) և Հայկական սպիտակատամը (Crocidura armenica Gureev):

Հայցվող տարածքում Կարմիր գրքային տեսակ հանդիպելու դեպքում շինարարական աշխատանքները կդադարեցվեն և դրա մասին կայտնվի լիազոր մարմնին:





Եղեգնակատու (Felis chaus)　Վայրի ոչխար (մուֆլոն) Ovis orientalis gmelinii





Հնդկական Մացառախոզ (Histryx indica)　Կռնչան բադ, (Anas platyrhynchos)





Մեհելիի պայտաքիթը (Rhinolophus mehelyi Matschie)　Հայկական սպիտակատամը (Crocidura armenica Gureev):

Վաչազան գետի հունի մաքրման աշխատանքների իրականացման տեղամասում բացակայում են բույսերի վայրի և կարմիրգրքային տեսակները:

Տարածքում ՀՀ Բույսերի կարմիր գրքում ներառված տեսակները բացակայում են:

Այստեղ չեն հայտնաբերվել նաև ՀՀ Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ: Վաչազան գետում շատ հազվադեպ հանդիպում են հետևյալ ձկնատեսակները՝ արևելյան տառեխիկ, կողակ և արևելյան թեփուղ:

## 3.6 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

«Զանգեզուրի կենսոլորտային համալիր»

2013թ. -ին ՀՀ կառավարության N 1465-Ն որոշման համաձայն ստեղծվեց «Զանգեզուրի կենսոլորտային համալիրը», որն իր մեջ ներառում է՝

- «Շիկահող» պետական արգելոցը
- «Սոսու պուրակ» պետական արգելավայրը
- «Զանգեզուր» պետական արգելավայրը
- «Սև լիճ» պետական արգելավայրը
- «Արևիկ» ազգային պարկը
- «Բողաքար» պետական արգելավայրը
- «Խուստուփ» պետական արգելավայրը:

Կենսոլորտային համալիրի ստեղծման նպատակը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության բնականոն զարգացումը,

պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն էր:

***Գորիսի պետական արգելավայր***

Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկն է: Կազմավորվել է 1972-ին, ունի 1850 հա տարածք: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտան գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2800մ բարձրություններում: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի (այծյամ, բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մայրեհավ) պահպանության նպատակով:

***Շիկահողի արգելոց***

Արգելոց գտնվում է Սյունիքի մարզում՝ Խուստուփ լեռան հարավ արևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերին, Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում, 700-2800մ բարձրություններում: Այն հիմնվել է 1958 թվականին: Տարածքը կազմում է մոտ 10 330 հեկտար: Կազմավորվել է կաղնու, բոխու, հաճարենու, սովորական կենու, սոսու անտառների և կենդանիների պահպանության նպատակով:

Այս տարածքները դուրս են ծրագրի անմիջական ազդեցության գոտուց: Դրանք գտնվում են Քաջարանից 5-45կմ հեռավորության վրա: Պահպանվող ամենամոտ տարածքը «Զանգեզուր» պետական արգելավայրն է՝ մոտ 5կմ, ամենահեռուն՝ «Սև լիճ» արգելավայրը՝ մոտ 46կմ հեռավորությունների վրա:

## 3.7 Պատմամշակույթային հուշարձաններ

Կապանը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Նախկին «Կատար» բնակավայրի տարածքում կանգուն է «Կատարի վանք» եկեղեցին (քաղաքից 5 կմ դեպի արևմուտք, Ողջի գետի աջ ափին): Հիշարժան կառույցներից են Կատարավանք ամրոցը (XXVIII դդ, քաղաքից 5 կմ դեպի արևմուտք, Ողջի գետի աջ ափին)՝ իր օժանդակ շինություններով, Կկոց քար ամրոցը (X դ, ավերված), Հալիձորի ամրոցը բազմաթիվ դամբարաններով (10-18դդ, Ողջի գետի բարձրադիր աջ ափին, ՀԷԿ-ի մոտ): 1723 թվականին Դավիթ Բեկի կողմից վերակառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին և Վահանավանք եկեղեցին (Կապանից 7կմ հետավորության վրա) իրենցից ներկայացնում են մի վանական համալիր, Սուրբ Գրիգոր եկեղեցին աչքի է ընկնում բազմաթիվ տապանաքարերով:

Վանական համալիր Բեխի անապատը (Տանձափարախի անապատ, Արիստակես անապատ, 10-17 դդ) գտնվում է թաղամասից 4 կմ հարավ-արևելք, բարձր լեռան արևելյան լանջին, անտառի մեջ:



*Հալիձորի ամրոց*



*Վահանավանք եկեղեցի*

Քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում, որը 2002թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից, ներառված է 177 հուշարձան (21 միավոր):

Ինչպես բնության հատուկ պահպանվող տարածքները, այնպես էլ պատմամշակութային հուշարձանները նախագծի իրականացման տարածքից գտնվում են բավականին մեծ հեռավորությունների վրա և աշխատանքների իրականացման ժամանակ ոչ մի ազդեցության չեն ենթարկվելու:

**Բնության հուշարձանների ցանկ**

**Երկրաբանական հուշարձաններ**

| | | |
|---|---|---|
| 1. | «Սատանա» բնական քանդակ | Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում |
| 2. | «Անանուն» ժայռ-մնացուկներ | Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում |
| 3. | «Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր | Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքի հս-արլ եզրին |
| 4. | «Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր | Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին |
| 5. | «Մալևի ինտրուզիա» ներժայթուկ | Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալև գյուղի մոտ |
| 6. | «Անանուն» ապարների մերկացումներ | Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում |
| 7. | «Խորձոր» V-աձև կիրճ | Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ |
| 8. | «Անանուն» էրոզիոն ռելիեֆ | Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում |
| 9. | «Անանուն» սյունաձև բազալտներ | Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում |
| 10. | «Անանուն» ապլիտային դայկաներ | Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ |
| 11. | «Հերթ» որմնաքանդակ | Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ |
| 12. | «Փղի ճտեր» որմնաքանդակ | Սյունիքի մարզ, Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին |
| 13. | «Անանուն» սյունաձև բազալտներ | Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին |
| 14. | «Անանուն» սյունաձև բազալտներ | Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին |
| 15. | «Շիշքար» (Բաղաքար) դայկա | Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում |
| 16. | «Անանուն» բուրգանման մնացուկներ | Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում |
| 17. | «Սատանի կամուրջ» բնական կամուրջ | Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ |

| | | |
|---|---|---|
| 18. | «Բնական թունել» | Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա |
| 19. | «Ագարակի» բրածո ֆլորա | Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք |
| 20. | «Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա | Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա |

**Ջրաերկրաբանական հուշարձաններ**

| | | |
|---|---|---|
| 1. | «Ջրաղացի» աղբյուրներ | Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա |
| 2. | «Ծործոր» աղբյուրներ | Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա |
| 3. | «Վարդանաձորի» աղբյուրներ | Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև |
| 4. | «Սմբուլի» աղբյուր | Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա |
| 5. | «Անապատի» աղբյուր | Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամա-սում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա |
| 6. | «Ջրաղացի» աղբյուր | Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա |
| 7. | «Սնջուր» աղբյուր | Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա |
| 8. | «Շահբուլաղ» աղբյուր | Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա |
| 9. | «Քյահրիզ» աղբյուր | Սյունիքի մարզ, Նռնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա |
| 10. | «Անանուն» աղբյուր | Սյունիքի մարզ, Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա |
| 11. | «Մեծ Նովի» աղբյուր | Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, ճամփ-եզրին, խաչքարի մոտ |
| 12. | «Որոտան» աղբյուր | Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում |
| 13. | «Կաթնաղբյուր» աղբյուր | Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա |
| 14. | «Սպիտակջուր» աղբյուր | Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա |
| 15. | «Շռան» աղբյուր | Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա |
| 16. | «Անանուն» աղբյուր | Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա |

**Ջրագրական հուշարձաններ**

| | | |
|---|---|---|
| 1. | «Ծաղկարի» լիճ | Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա |
| 2. | «Կապուտան» (Գոգի) լիճ | Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա |
| 3. | «Անտակ» լիճ | Սյունիքի մարզ, Բռնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ |
| 4. | «Գազանա» լիճ | Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա |
| 5. | «Կապույտ» լիճ | Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ |
| 6. | «Բերդալիճ» լիճ | Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա |
| 7. | «Կապուտջուղ» ջրվեժներ | Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա |
| 8. | «Շինուհայր» ջրվեժ | Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ |
| 9. | «Աղվան» ջրվեժ | Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալև գետակի, լքված Մալև գյուղից 2.0 կմ հվ-արլ |
| 10. | «Վարդանիձոր» ջրվեժ | Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա |
| 11. | «Աջիբաջ» ջրվեժ | Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ |
| 12. | «Շաքի» ջրվեժ | Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա |
| 13. | «Պառավաձոր» ջրվեժ | Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ |

**Բնապատմական հուշարձաններ**

| | | |
|---|---|---|
| 1. | Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր | Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ |
| 2. | Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ | Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում |
| 3. | «Որոտան» բնապատմական համալիր | Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին |
| 4. | Հին Գորիսի («Կյորեսս») հրաբխային ապարներ | Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին |

**Կենսաբանական հուշարձաններ**

| | | |
|---|---|---|
| 1. | «Մեղրիի սոսի» | Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի |
| 2. | «Շիբլյակ» | Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա |
| 3. | «Սֆագնումային մամուռներ» | Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ |

### 3.8 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում հողային աշխատանքների իրականացնելիս 3 էքսկավատորներ և 1 կռունկ, իսկ շինության կառուցման ընթացքում 1 աշտարակային և մեկ ավտոմոբիլային կռունկ: Հաշվարկը արված է ենթադրելով, որ այս շին.տեխնիկան շահագործվում միաժամանակ յուրաքանչյուր շինարարության փուլում՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:
Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left( \frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

<u>Հողային աշխատանքների փուլ</u>

**Ելակետային տվյալներ**

- էքսկավատորի Hyndai 323 ձայնային հզորություն ($L_{w1}$)՝ 99 դԲ
- Աշտարակային կռունկ T6013A-8A-4.2 ձայնային հզորություն ($L_{w2}$)՝ 100 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

**Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ**

- **χ = 1** (մոտ դաշտի ազդեցության գործակից)

- **Φ = 1** (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- **Ω = 2π** (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- **k = 1** (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- **B = 200** (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Էքսկավատորի աղմուկի մակարդակ՝ $L_{w1}$ = 99 + 10 * $\log_{10}$ ((1 *1/(2/π*50²)+4/1*200) = 99+10*(-16.98) =82.02 դԲ
- Կռունկի աղմուկի մակարդակ՝ $L_{w2}$ = 100 + 10 * $\log_{10}$ ((1 *1/(2/π*50²)+4/1*200) = 100+10*(-16.98) =83.02 դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$LA_{էկվ}$ = 10 * $\log_{10}$( 2*10^{82.02/10} + 10^{83.02/10}) = 10 * $\log_{10}$ ( 2*10^{8.202} + 10^{8.302}) = 87.15 դԲ

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 87.15 դԲ:

<u>Շենքերի կառուցման փուլ</u>

**Ելակետային տվյալներ**

- Ավտոկռունկ КС -55713-6 ձայնային հզորություն ($L_{w1}$)՝ 105 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

**Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ**

- **χ = 1** (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- **Φ = 1** (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- **Ω = 2π** (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- **k = 1** (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- **B = 200** (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Կռունկ աղմուկի մակարդակ՝ $L_{w1}$ = 105 + 10*$\log_{10}$((1 *1/(2/π*50²)+4/1*200) = 105+10*(-16.98) =88.02 դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$LA_{էկվ}$ = 10 * $\log_{10}$( 3*10^{88.02/10}) = 10 * $\log_{10}$ ( 3*10^{8.802}) = 92.79 դԲ

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երեք կռունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 92.79 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 2OOկգ/մ²: Ցանկապատը հանդիսանում է միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան: Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$L_{պդ}$ = 23*lg*$m_{է}$ - 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/մ³

$L_{պդ}$ = 13*lg*$m_{է}$ - 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/մ³

Որտեղ $m_{է}$ = K*m - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ³,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ³

$m_{է}$ = 7850 * 1=7850

$L_{պդ}$= 23*lg*$m_{է}$ - 13 = 23*lg(7850) – 13 = 23*3.894 – 10 = 89.562–10 = 79.56 դԲ

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

Հողային աշխատանքների փուլ

$LA_{տար} = LA_{էկվ} – L_{աղ} = 87.15 – 79.56 = 7.59$ դԲ

Շինության կառուցման փուլ

$LA_{տար} = LA_{էկվ} – L_{աղ} = 92.79 – 79.56 = 13.23$ դԲ

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը հողային աշխատանքների փուլում կկազմի 7.59 դԲ, իսկ շենքերի կառուցման փուլում՝ 13.23 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

### 3.9 Թափոնների կառավարում

Կապանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարրողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

| | Անվանումը | Վտանգավոր-ության դասը | Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի» | Քանակը, ամբողջ շինարարության համար |
|---|---|---|---|---|
| 1. | Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ | IV | 9120060101004 | 200տ |
| 2. | Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | IV | 9120040001 00 4 | 0.7 տ/տարի |
| 4. | Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ **(այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)** | IV | 35131100 01 00 4 | 3 մ3 |
| 6. | Չտեսակավորված ալյումինի ջարդոն | V | 35310101 01 99 5 | 2 մ3 |
| 8. | Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսայրուկներ | V | 35121601 01 99 5 | 0.1տ |

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և նույնպես հեռացվելու է աղբավայր:

Սև և գունավոր մետաղները նույնպես հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

### 3.10 Սոցիոլական գործոն

Կապանը Սյունիքի մարզի մարզի մարզկենտրոնն է: 2017 թվականի նոյեմբերից, իր մեջ միավորելով տարածաշրջանի գյուղական համայնքները, դարձել է Կապան խոշորացված համայնք: Գտնվում է երկրի հարավ-արևելքում, Երևանից 320 կմ հարավ-արևելք Ողջի գետի ափին, Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին, ծովի մակարդակից 910 մ բարձրության վրա:

Քաղաքի բնակչության թիվը 2022թ. մարդահամարի տվյալներով կազմում է 33200 մարդ, որի 51,4%-ը կազմում են տղամարդիկ, իսկ 49,6%-ը՝ կանայք: Բնակչության 20%-ը կենսաթոշակառուներ են:

Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Պատմականորեն Կապանը հանդիսանում է հանրապետության հանքարդյունաբերության կենտրոններից: 1840թ. հույների կողմից հիմք է դրվել ընդերքօգտագործմանը: Պղնձով հարուստ ընդերքն օգտագործելու նպատակով ստեղծվել է Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատը, որի լուծարումից հետո հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն է իրականացնում "Դինո Գլոդ Մայնինգ Քամփնի" ՓԲԸ-ն: Ընկերությունը բնակչությանը ապահովում է աշխատանքով, ինչը դրական է ազդում համայնքի ընդհանուր զարգացման Համայնքի տարածքում տնտեսական գործունեություն են իրականացնում "Կապանի մեքենաշինական գործարան> ԲԲԸ-ն, Կապանի "Ճանապարհների շինարարության և շահագործման" ՍՊԸ- ն, Կապանի "Նորոգշին" ՍՊԸ-ն, "Վայքլ" ՍՊԸ-ն և այլն: Համայնքի տարածքում գործում են սննդարդյունաբերության, մանրամեծածախ առևտրի, հանրային սննդի, կենցաղային սպասարկման բազմաթիվ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռներեցներ:

Համայնքի բնակչությանը կապի, ջրամատակարարման, գազի, էներգամատակարարման ոլորտում ծառայությունները մատուցվում են համապատասխան

մասնագիտացված կազմակերպությունների միջոցով: Բնակչության բուժսպասարկման և առողջապահության խնդիրների սպասարկումն իրականացվում է "Կապանի բժշկական կենտրոն" ՓԲԸ-ի, "Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր" ՓԲԸ-ի, "Կապանի ստոմատոլոգիական պոլիկլինիկա" ՓԲԸ-ի միջոցով: Համայնքի ենթակությամբ գործում են "Կապանի կոմունալ ծառայություն" ՀԲՀ-ն:

Համայնքի տարածքում գործում են 13 հանրակրթական դպրոցներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների Կապանի մասնաճյուղեր, քոլեջներ, "Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն> ՊՈԱԿ-ը, Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի Կապանի մասնաճյուղը, Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրը: Համայնքի ենթկայության տակ գործում են արտադպրոցական և նախադպրոցական ուսումնական հաստատություններ՝ 12 ՆՈՒՀ, 3 երաժշտական դպրոց, 3 մարզադպրոց, արվեստի և գեղարվեստի մանկական դպրոցներ:

2011 թվականին ստեղծվել է "Կապանի մանկական կենտրոն" ՀՈԱԿ-ը, որն իրականացնում կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական, մանկավարժական, իրավական պաշտպանության աջակցության ծրագրեր: Մշակութային ծրագրերը քաղաքում իրականացվում է Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի, "Մշակույթի կենտրոնի" միջոցով: Քաղաքի մշակութային օջախներից են՝ երկրագիտական թանգարանը, Շմավոն Մովսիյանի անվան պատմության թանգարանը, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը, ակումբագրադարանային միավորումը: Երեխաների ժամանցը կազմակերպվում է "Վ. Սարգսյանի անվան մանկական գրսայգի" ՀԲՀ-ի միջոցով:

## 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկակական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման համար, սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակություն ունեցող «Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի նախագծման ժամանակ կատարել օբյեկտի (շենքի) շինհրապարակի սեյսմիկ պարամետրերի գնահատում՝ գրունտների դինամիկ բնութագրերի և հաշվարկային արագացումների որոշում, ինչպես նաև «Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցումն ու շահագործումն իրականացնել համապատասխան ավարտված շինարարական օբյետների հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին, ՀՀ

օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետի, Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերության, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթների) պարտադիր պահանջներին:»:

### 4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- քանդման աշխատանքներ
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն գնահատման հաշվետվությունում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

### 4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

-դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

### 4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

#### 4.3.1 *Մթնոլորտային օդ*

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.

2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.

3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.

6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

9) Շինհրապարակի կազմակերպման, շինարարական հրապարակներում փոշու արտանետումները վերահսկելու նպատակով օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրման և փոշենստեցման միջոցառումներն իրականացնել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանի պահանջներին համապատասխան, ինչպես նաև պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները

### 4.3.2 *Ջրային ռեսուրսներ*

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը, անիվների լվացումից առաջացող հոսքաջրերը, բետոնախառնիչ և բետոնամղիչ մեքենաների լվացման արդյունքում առաջացող բետոնաջրեր կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը կնախատեսվի շինարարական հրապարակի տարածքում: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

### 4.3.3 *Հողային ռեսուրսներ*

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

### 4.3.4 *Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը*

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

### 4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ*

***<u>Շինարարության փուլ</u>***

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող

օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

***<u>Շահագործման փուլ</u>***

- պահեստում նյութերը դասավորել ըստ հրդեհավտանգության աստիճանի,
- դյուրավառ և այրվող նյութերը պահել առանձին հատվածներում,
- չթույլատրել նյութերի պահեստավորում տարհանման ուղիներում և ելքերի մոտ,
- պահպանել անցուղիների և ելքերի ազատ վիճակը,
- ապահովել բնական կամ հարկադիր օդափոխություն:
- օգտագործել տեխնիկապես սարքին էլեկտրական ցանց և սարքավորումներ,
- բացառել ժամանակավոր կամ վնասված լարերի օգտագործումը,
- իրականացնել էլեկտրական համակարգերի պարբերական ստուգում,
- աշխատանքային օրվա ավարտից հետո անջատել չօգտագործվող սարքավորումները:
- պահեստը համալրել համապատասխան տեսակի կրակմարիչներով (փոշային, ածխաթթվային և այլն),
- ապահովել ներքին հրդեհային ջրամատակարարում կամ հրդեհային ծորակներ,
- տեղադրել հրդեհային ազդանշանային համակարգ,
- ապահովել ծխի կամ ջերմության տվիչների առկայություն,
- կազմակերպել ազդարարման համակարգի պարբերական տեխնիկական սպասարկում:
- արգելել ծխելը պահեստային տարածքում,
- իրականացնել հակահրդեհային միջոցների պարբերական ստուգում,
- ստուգել կրակմարիչների պիտանելիությունը,
- վերահսկել պահեստում հրդեհավտանգ նյութերի պահպանման պայմանները:

### 4.3.6 *Աղմուկ և թրթռում*

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

➢ խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;

➢ Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

➢ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

➢ շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

➢ պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը

➢ շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

➢ Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

### 4.3.7 *Թափոնների կառավարում*

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

➢ Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

➢ Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից

➢ Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել

➢ Բացառել տարածքում թափոնների բաց այրումը

➢ Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելուընթացակարգերը;

➢ Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;

➢ Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

### 4.3.8 *Տարածքի բարեկարգում կանաչապատում*

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

## 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

«Պահեստի կառուցում,անավարտ շինության վերակառուցում, ավարտում» օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Շինարարության ողջ ընթացքում կիրականացվի մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում օդի դրական ջերմաստիճանի դեպքում, օրեկան 2 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
5. Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարաության ընթացքում 2380 հազ. դրամ:
6. Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

| Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ | | |
|---|---|---|
| Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով | | 700000 |
| Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ; | 24x40000 | 960000 |
| Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: | 24x30000 | 720000 |
| Ամբողջ շինարարության համար | | 2380000 |

# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՊԱՐԱՄԵՏՐԵՐ | ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|---|---|---|
| Ընդհանուր դրույթներ | Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն | (a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ<br>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել<br>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:<br>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)<br>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: |
| Շինարարական աշխատանքներ | (a) Օդի որակ | (b) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով.<br>(c) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ.<br>(d) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով.<br>(e) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները.<br>(f) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով.<br>(g) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:<br>(h) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:<br>(i) Շինհրապարակի կազմակերպման, շինարարական հրապարակներում փոշու արտանետումները վերահսկելու նպատակով օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրման և փոշենստեցման միջոցառումներն իրականացնել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանի պահանջներին համապատասխան, ինչպես նաև պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները |
| | Աղմուկ և թրթռուն | (j) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում |

| | | |
|---|---|---|
| | | (k) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:<br>(l) Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում<br>(m) Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,<br>(n) Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,<br>(o) Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:<br>(p) Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը; |
| | Թափոնների կառավարում | (a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>(c) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն<br>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել |
| Կեղտաջրերի հեռացում | Ջրի որակ | (a) Շինարարական անձնակազմը կօգտվի շինհրապարակում տեղադրվող բիոզուգարաններց, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն<br>(b) տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:<br>(c) ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,<br>(d) անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակում, իրենից ներկայացնում է պլաստմասե տարրողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: |
| Հետիոտների և երթևեկության | Շինարարական աշխատանքների | (e) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի |

| | | |
|---|---|---|
| ապահովություն | հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ | սահմանափակվում հետնյալով.<br>(f) պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ<br>(g) Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում:<br>(h) Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:<br>(i) Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.<br>(j) Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում |
| Տարածքի բարեկարգում/ կանա չապատում | | (k) կատարել կանաչապատ-ման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;<br>(l) ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիտորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար |
| Թափոնների կառավարում | Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում;<br><br>Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ | (m) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:<br>(n) շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:<br>(o) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից<br>(p) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն<br>(q) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել<br>(r) Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով<br>(s) վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը<br>(t) Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;<br>(u) Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը<br>(v) հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար; |

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

| Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Որտեղ իրականացնել | Ինչպես իրականացնել | Ժամանակամիջոց | Կատարող |
|---|---|---|---|---|---|
| Շինանյութերի մատակարարում | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից | Մատակակարի հիմնարկում կամ պահեստում | Փաստաթղթերի ստուգում | Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում | Կապալառու |
| Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ | - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում<br>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ<br>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում | - Շինհրապարակ<br>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ | Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում | Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում | Կապալառու |
| Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում | - Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում<br>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում | Մասնագիտացված ընկերություն | Գործընթացների գործունեության ստուգում | Մեխանիզմների շահագործման ընթացքում | Կապալառու |
| Հողային աշխատանքներ | - Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված | Շինհրապարակ | Գործընթացների ստուգում | Հողային աշխատանքների | Կապալառու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | վայր | | | ընթացքում | |
| Իներտ շինանյութերի գնում | - Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից | Իներտ նյութերի պահեստ | Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում | Մատակարարման ընթացքում | Կապալառու, մատակարար |
| Կենցաղային աղբի առաջացում | - Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում<br>- համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ | Շինհրապարակ | Արտաքին զննում | Շինարարության ողջ ընթացքում | Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն |
| Աշխատանքի անվտանգություն | - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով<br>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն | Շինհրապարակ | Ստուգման գործընթացներ | Աշխատանքների ողջ ընթացքում | Կապալառու, պատվիրատու |
| Տարածքի բարեկարգում<br><br>Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում | -ճանապարհներ, սալվածքներ<br><br>վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր | Կառուցապատվող հողամաս<br><br>Շինհրապարակ | Արտաքին զննում<br><br>Արտաքին զննում | Շինարարության Ավարտին<br><br>Շինարարության ընթացքում | Կապալառու<br><br>Կապալառու, |

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Մթնոլորտային արտանետումների զույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
12. 2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,
13. Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,
14. Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,
15. Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 8 ապրիլի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Կապան Կապան ք. Գործարանային փողոց 1/7 անավարտ շինություն

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի ներդրման պայմանագիր 02.04.2025թ. h.1711

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09-001-0501-0029
Մակերեսի չափը (հա)՝ 0.605
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 08042025-09-0034, գաղտնաբառ՝ T82WBZIN2TBS**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

էջ 1/2

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 09-001-0501-0029-002 | Պահեստ | 165.08 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 09-001-0501-0029-001 | Անավարտ շինություն | 3818.12 քմ | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 3 | 09-001-0501-0029-003 | պարիսպ | 13.64 քմ, 34.1 խ.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա է ինքնակամ կառուցված 134.53 ք.մ. մակերեսով խանութ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՄԱՐՏԻՆ ՋԻՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 08042025-09-0034, գաղտնաբառ՝ T82WBZIN2TBS

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգել կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

Կադաստրի կոմիտե


ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Ձև 1
Սեփականատեր
ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան համայնք, ք. Կապան
մարզ, համայնք, ժամանակավոր
Սակերեսս հա 0.60500
Ծածկագիր 09-001-0501-0029
Նպատակային նշանակություն Բնակավայրերի
Գործառնական նշանակություն հասարակական կառուցապատում
Սահմանային կետի համարը
X
Y
Հեռավորությունը (մետր)
1 8624600,045 4342292,841 14,51
2 8624614,530 4342291,912 13,17
3 8624627,652 4342293,011 3,29
4 8624630,919 4342293,387 0,99
5 8624630,919 4342292,392 17,01
Կազմակերպություն
Սահմանադրող ընկերություն
Ստորագրություն
Իրավաբանական անձի անվանումը
ՀՎՀՀ 09421859
Ստորագրություն
ամիս ամսաթիվ
կազմման 13.02.2025
հաստատման 21.02.2025
Կ.Տ.

| | Y | X | |
|---|---|---|---|
| 6 | 8624630,176 | 4342275,397 | 1,66 |
| 7 | 8624630,105 | 4342273,742 | 0,12 |
| 8 | 8624630,100 | 4342273,626 | 0,25 |
| 9 | 8624630,090 | 4342273,377 | 103,46 |
| 10 | 8624533,056 | 4342237,478 | 23,80 |
| 11 | 8624532,537 | 4342261,267 | 33,84 |
| 12 | 8624531,947 | 4342295,103 | 0,42 |
| 13 | 8624532,350 | 4342295,220 | 1,44 |
| 14 | 8624533,734 | 4342295,624 | 18,92 |
| 15 | 8624551,893 | 4342300,943 | 10,37 |
| 16 | 8624571,221 | 4342299,734 | 2,13 |
| 17 | 8624573,344 | 4342299,601 | 20,62 |
| 18 | 8624593,901 | 4342297,949 | 7,85 |
| 19 | 8624599,875 | 4342292,852 | 0,17 |
| 1 | 8624600,045 | 4342292,841 | |

**1. Խանութ**

| Անկյունների բեկման կետեր | Y | X | Հեռավորությունը (մետր) |
|---|---|---|---|
| 1 | 8624540,917 | 4342279,895 | 11,51 |
| 2 | 8624552,399 | 4342279,086 | 9,46 |
| 3 | 8624553,064 | 4342288,519 | 30,63 |
| 4 | 8624583,618 | 4342286,364 | 4,94 |
| 5 | 8624583,271 | 4342281,438 | 41,12 |
| 6 | 8624580,378 | 4342240,415 | 0,36 |
| 7 | 8624580,352 | 4342240,052 | 10,68 |
| 8 | 8624569,699 | 4342240,804 | 1,60 |
| 9 | 8624569,587 | 4342239,207 | 8,20 |
| 10 | 8624561,408 | 4342239,784 | 1,60 |
| 11 | 8624561,520 | 4342241,380 | 23,26 |
| 12 | 8624538,316 | 4342243,017 | 36,97 |
| 1 | 8624540,917 | 4342279,895 | |

**4. Անավարտ շինություն**

| Անկյունների բեկման կետեր | Y | X | Հեռավորությունը (մետր) |
|---|---|---|---|
| 1 | 8624583,278 | 4342281,538 | 5,48 |
| 2 | 8624588,747 | 4342281,202 | 6,01 |
| 3 | 8624594,743 | 4342280,864 | 6,26 |
| 4 | 8624600,990 | 4342280,424 | 6,16 |
| 5 | 8624607,136 | 4342280,054 | 6,32 |
| 6 | 8624613,436 | 4342279,512 | 4,35 |
| 7 | 8624613,074 | 4342275,175 | 17,09 |
| 8 | 8624630,105 | 4342273,742 | 36,62 |
| 9 | 8624627,622 | 4342237,204 | 47,35 |
| 10 | 8624580,378 | 4342240,415 | 41,23 |
| 1 | 8624583,278 | 4342281,538 | |

| Մասշտաբ 1:500 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | [illegible] Հակոբյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0279 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «[illegible]» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 09481859 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 13.02.2023թ. |
| | հատակագծի կազմման | 21.02.2023թ. |

Կ.Տ.

FM46-8136-F466-5D24

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

**N ՆԹ-5809-25 22.07.2025թ.**

Օբյեկտ **Կառուցում, Ավարտում, Վերակառուցում, անավարտ շինություն,պահեստ,**

անավարտ շինություն 3818.12 քմ,պահեստ 206.0 քմ

**Նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր, ռիսկայնության աստիճանը՝ IV** նախագծային փաստաթղթերի մշակման համար։

Գտնվելու վայրը **Մարզ՝ Սյունիք, համայնք՝ Կապան Կապան ք. Գործարանային փողոց 1/7 անավարտ շինություն, 09-001-0501-0029**

Կառուցապատող **«ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ / 09428866 / Հայաստան, ՍՅՈՒՆԻՔ, ԿԱՊԱՆ, ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ, --- 1/7**

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ «ԴՈՄԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 08042025-09-0034**

Առաջադրանքի գործողության ժամկետը **մինչև 22.07.2028թ.**

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Հասարակական կառուցապատման, բնակավայրերի |
| 2. (*) Հողամասի չափսերը | 0.605 |
| 3. Հողամասի առկա վիճակը | կառուցապատված |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | առկա են |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | համաձայն ներկայացված սխեմայի |

(կից ուսումնասիրությունների անվանումը և դրանց սահմանները համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

չկան

([illegible])

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

համաձայն ներկայացված սխեմայի

([illegible])

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել անավարտ շինություն /37.0+12.0+10.0+78.9+47.0+90.9/մ վերակառուցման, պահեստի /27.0+11.4+3.3+19.4+19.9/Մ պահեստի կառուցման նախագիծ

([illegible])

9.1.(*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

7 մ

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

9.3.(*) թույլատրելի բարձրությունը (մետր)

(սահմանային հարկայնության բարձրությունը [illegible] ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» [illegible])

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

9.7 այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում

առկա են

([illegible])

12.2 (*) Էլեկտրամատակարարում

առկա են

([illegible])

12.3. (*) գազամատակարարում — առկա են

[illegible]

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցության մայրուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

[illegible]

12.5. թույլ հոսանքներ

12.6. աղբահանություն — «Կապան համայնքի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ պայմանագիր

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — կազմակերպված ջրահեռացում

[illegible]

14. Բարեկարգում — տարածքի բարեկարգում

[illegible]

15. Շինարարական նյութեր — ցեմենտ, ավազ, ամրան, խիճ, եվրոշինանյութ և այլ նյութ

[illegible]

16. Պաշտպանական կառույցներ — -

[illegible]

17. Հակահրդեհային պահանջներ — համաձայն գործող հակահրդեհային նորմերի

[illegible]

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — համաձայն ՀՀՔՀ 23-101-2017թ./ նորմերի

19. Երջակա միջավայրի պահպանում — շին.աղբը կազմակերպված տեղափոխել 6 կմ հեռավորության վրա՝ աղբավայր

[illegible]

20. Շինարարության կազմակերպում — սահմանափակել շին. տարածքը, կազմել աշխատանքների իրականացման ժամանակացույց

[illegible]

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — մինչև 22.07.2028թ., նախագծման փուլերը՝ նախագիծ և աշխատանքային փաստաթղթեր,

[illegible]

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — Պետական համալիր փորձաքննություն

[illegible]

23. Միջանկյալ համաձայնեցում — Կապանի համայնքապետարան

[illegible]

24. Հասարակական քննարկումներ

[illegible]

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում — տեխնիկական վիճակի (սեյսմիկ) զննության եզրակացություն

[illegible]

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

[illegible]

27. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված լրացուցիչ պայմաններ

28. Այլ պայմաններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

22.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2013 թվականի հունիսի 5-ի N176Ն որոշմամբ

**Բնական գազի մատակարարման**
**(Մատակարար - Բաժանորդ (կազմակերպություն))**

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1410322/3330

գ. Գյումրի « 25 » 03 2022 թվական
(պայմանագրի կնքման վայրը)

Մատակարարը՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ,
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)
[illegible],
(մասնաճյուղի անվանումը, գտնվելու վայրը)
ի դեմս [illegible],
(պաշտոնը, անունը, ազգանունը)
որը գործում է 01-33/02 03.01.2022թ. [illegible] հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Բաժանորդը՝ [illegible],
(կազմակերպության անվանումը, գրանցման համարը, գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն)
գ. Գյումրի, [illegible],
(ազգանունը, բնակության հասցեն, գտնվելու վայրը)
ի դեմս [illegible],
(պաշտոնը, անունը, ազգանունը)
որը (ով) գործում է [illegible] հիման վրա,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն են.
   1) ***Հանձնաժողով***՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
   2) ***ԳՄՕԿ***՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» N95Ն որոշման 1-ին կետով հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ.

1

3) ***Հաշվարկային ամիս***՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին և ավարտվում է հաջորդ օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 11:00-ին:

4) ***10 հազար խորանարդ մետր և ավելի սպառում ունեցող Բաժանորդ***՝ անձ, որի ծախսած բնական գազի ամսական քանակությունը նախորդ օրացուցային տարում ավելի քան երկու հաշվարկային ամսում գերազանցել է 10 հազար խորանարդ մետրը (Ցելսիուսի 20 աստիճանի և 101.325կՊա կամ 1.033227կգ/սմ² ճնշման պայմաններում):

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը պարտավորվում է Բաժանորդին մատակարարել բնական գազ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել մատակարարված բնական գազի դիմաց:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մատակարարի և Բաժանորդի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ԳՄՕԿ-ով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

4. Մատակարարը պարտավոր է.

